

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամայս 2 ին Եւթելէհեմի մէջ 18 տարեկան | ատին աղայ մը անսանձ ձիու մը վերաց նատած՝ վարդնելու ժամանակ կիյնայ վերայէն և սորբ առապանդակին մէջ կը մնայ . տասն վայրկենի չոփ խեղճ պատանին քարերուն վերաց գետնաքարշ լինելով՝ դրւիլ կը ջաղջախի : Յէ՛ և գիւղացիներն հասնելով ձին կը կեցնէն և տղան կ'աղատին . բայց հինգ ժամէն յետոց կը մեռնի :

— 8 ին նոյն գիւղի որբանոցի արդարքը , որ հաստատուած է Ենթօնի Պէլոնի անունն կամօլիկ բահանացի մը ջանիւք , և ուր կընդունուեն ամեն կողմէ և ամեն ազգէ որբ արդարք , կ'երթան Առղումնին աւազանեներն լողալու , յորոց Արագարէթցի 15 տարեկան | ատին որբ մը լողալու ժամանակ կը խեղդուի :

— 10 ին գարձեալ նոյն գիւղին մէջ կը պատահի հետեւեալ տիսուր գէպքը . Յոյն մեծասան մը համրիչի գործարանին մէջ , ուր շատ բանուորներ կ'աշխատին , աշխատութեան ժամանակ 10 տարեկան Յոյն բանաւոր տղայ մը հն գտնուած լցուն աարձանակին ձեւքը կ'առնէտ տիսնելու համար , առանց գիտնալու լցուն լինելո . յանկարծ ատրամանակը կը պարպուի և գնտակը դիմացը եղող | ատին ծերունի գործաւորի մը քամակէն մտնելով կուրծքէն գուրս կ'եղէ . վիրաւորեալ երկու ժամէն վերջը կը մեռնի . խել տղան երկիւղէն կը փախչի անմիջապէս և մինչեւ ցարդ աներեւոյթ է :

— 16 ին Տեղւոյս կառավարիս Վը սեմ . Ենթամիլ Փաշան 'ի Կ . Պօլս մեկնեցաւ իւր տեղը փոխանորդ կարգելով տեղւոյս Առւհասէպէճին :

— 25 ին Հյոպուեի մէջ Հայ երիտասարդ մը երբ երեկոյեան գետ արած առան կը տարուի . տանը մէջ մէջ քի գանեսկը հանելով փորը կը խորմէ և հետեւեալ օրը կէս օրին կը մեռնի :

— 31 ին Եկաֆֆ զինուոր մի տկարութեան պատճառուու կարագ չը լինիր կրթութեան ժամանակ իւր ընկերաց հետ գտնոււիլ : Հարիւրապեալ կը մանել վրանին տակ , ուր խեղճ զինուուրը պառկած կը լինի . կը հարցնէ թէ՛ ինչու կրթութեան չեւ գնացած . առայս իւր տկարութիւնը կը յացնէ . հարիւրապեալ չը հաւատար զինուուրի խօսքին . ուստի սոււր եւ առելով կողքին ոտքալ կը դարնէ . հարուածը մահաբեր կը լինի թժոււտու գիւղացի զինուուրին համար . վասն զի շունչը սպառելով անմիջապէս կը մեռնի :

— Բնեթելէհեմի Ծննդեան Այրի վարագուրի իննդիրն երկար տարիներ շարունակուելէն զինի՝ ՚ի վերջո ներկաց ամսոյս մէջ Լատինք յաջողեցան կախել իրենց ուղած վարագոյնն Յ . Դրբնէն ուղղակի առ Տեղւոյս Կառավարը չեղաղահն գրուած հրամանին համեմատ , որով պատուիրուած էր Հայոց և Յունաց լուր չը տալ կախման ժամանակ : Յոյնք անդացարելիք անտարբերութեամբ բոլորովին զիջան և Լատինաց նորասաեցին , մինչեւ անգամ իրենց կանթեզաց չուաններն պատերէն վերցնելով , որ առաջ ամենեւին այնպէս չէր , այլ վարագուրի մէջէն բացուած յատուկ ծակերալ պատէն կասպուած էին : Մէք Հոյքս միայնակ մնացինք , և ընդդիմադրելու ժամանակին անցած էր . Այժմ մեր կանթեզաց չուաններն միայն մնացած են , որոց մասին առաջարկութիւններ եղան որ վերցնենք Լատինաց և Յունաց նման , բայց հաճութիւնը չը տուինք : Տեսնենք թէ՛ ուր պիտի եւ

զերի սցն խնդիրն :

- Յունաց Արտասպէմի Միւրտա-
նութեան վիճակն սասաթիկ խուփու-
թեան մէջէ ։ Մինչդեռ Կիրիլս Պատ-
րիաբքն ձգելու և ոքսորելու ժամա-
նակ գրէթէ բօլոր Միտրանութիւնն
մի մորմին և մի հագի եղած էր, այժմ
ընդհանրաւակն՝ իւրաքանչիւր միաբա-
նական անդամ տարբեր մտածութեան
և ինքնակայ կոցութեան մէջ էր գրտ-
նուի : Պրոկոպիոս ներկայ Պատրիարքն
կը տեսնէ իւր շուրջ բորբոքուած խը-
ռովութեան հրդէն, բոց իւր ան-
տարբեր բնաւորութեամբ գողցես
անդրդուելի կը կարծէ իւր գահն :

Յունաց Միաբանութեան սցն վեր-
ջին երկամեայ կեանքն, շարժումներն
և յեղազգումներն եթէ մոռագիր զի՞-
նութեան առնուի, պարզապէս կը
տեսնուի, որ օտար քաղաքականու-
թիւն մի այնպիսի գերեր կը խաղայ,
որ մօտէն ամենեւին ըլ նշմարուիր,
այլ հետեւանդներն յառաջ գուլէն ըզ-
կիփ միայն կ'ուշաբերին թէ ենթար-
կեալը և թէ ականատեսք :

Մինչդեռ Յոյն Միտրանութիւնն
երդմամբ կ'երգնուր և զի՞նքն կը նզու-
վէր բնաւ երեկ բերան չ'առնուլ
Կիրիլսի անունն իբրեւ Պատրիարքի
անուն, այժմ խըրտումներ կը նշմար-
ուին զԿիրիլս վերսուին յԵրուսաղէմի
Պատրիարքական գահն հրաւիրելու :
Արդէն ոմանք դիմած են առ Կիրիլս
զվարով իրենց արարմանց վերայ եւ
շատերն ես դիմելու վերայ են : Բայց
կան այնպիսիք եւս, որոց համար Կի-
րիլս և Պրոկոպիոս երկրորդ ական բա-
ներ են, այլ իւրաքանչիւրն ուղղակի
իւր պատրիարքանալու յատակագիծն
կը գծէ :

Կարող ենք ասել, որ Կիրիլլսի
անկման ժամանակ հայրենասիրութիւ-
նըն և կրօնական անկախութեան ե-

ռանդին որոնչելի գերասաներ ունե-
ցաւ Յոյն Միտրանութիւնն մէջ,
բայց երկամեայ կարճ շրջանին մէջ ո-
տար քաղաքականութիւնն սցնապիսի
անզգալի կերպի վրդովից և ջլսակց
Միտրանութիւնն զօրութիւնն, որ այ-
ժըմ նոյն իսկ հայրենասիրութեամբ
վոռուածներն յուստահատ վիճակի մէջ
կը գտնուին և աւելի անձնական քան
թէ միաբանական կեցութեան վերայ
կը խորհին : Ո՞րչափ աշարժութիւն և
հեռատեսութիւն հարկաւոր է ներ-
կայ ժամանակի քաղաքադիական
բազմակերպիան ձարտարամտութեանց
զոհ ըլմնելու համար :



ՆՈԽԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Մահաւորի Յակոբ մահաւորի Կա-
րապետեան Կարմիրակապցի նու իրած է
Ս. Աթոռոց Թանգարանին մի մագա-
ղաթիայ գրչագիր Սաղմոս, Թուակա-
նըն անցայտ, յատուկ նամակաւ տե-
ղեկագրելով որ սցն Սաղմոսն ելած է
Ս. Ալի Փաշայի անձնական մատենագարա-
նէն, և ինքն տեսնելով զայն աճուրդի
հանուած իրերուն մէջ, գնած և զրկած
է ի Ս. Աթոռու, հետեւեալ յիշատու-
գրով Յիշատակէ այսմագաղաթ Սաղ-
մոս յԱկնայ գիւղէն Կարմիրակապցի
Մահաւորի Կարապետեան, Մահաւորի
Յակոբս, զայս Ս. Երուսաղէմայ Թան-
գարանին շնորհեցի, ով ոք ընթեռնու-
կամ նայելու համար ձեռք առնէ, կը
պարտաւորեմ որ յիշեսցէ զհոգիս իմ
մէկ Հայր Արք, 1874. Յուլիս 5. ՚ի
Կոստանդնուպօլիս ո :

Յատակի շնորհակալութեան ար-
ժանի են, ինչպէս բարեպաշտ Մահ-
աւորի Յակոբն, նցնապէս և ամեն Ազ-